«Հայաստանի ազգային հարստությունը ոչ թե հանքերն են, այլ կրթօջախները»։ Առաջնորդվելով այս սկզբունքով՝ Հայաստանի հաշվապահների ասոցիացիան հայտարարում է անվանական կրթաթոշակի մրցույթ, որին կարող են հավակնել ՀՊՏՀ «Հաշվապահական հաշվառում և աուդիտ» ֆակուլտետի 3-րդից 4-րդ կուրսի ուսանողները, որոնք չեն հանդիսացել նախորդ կիսամյակի կրթաթոշակի շահառու, չունեն աշխատանքային զբաղվածություն, ունեն մեծ ցանկություն Հայաստանի հաշվապահների ասոցիացիայում կամ ասոցիացիայի գործընկեր գրասենյակներում կառուցելու իրենց աշխատանքային կարիերան հաշվապահական ոլորտում և զարգացնելու ոլորտը Հայաստանում։

Կրթաթոշակի նպատակն է խրախուսել բարձր առաջադիմությամբ ուսանողներին և հաշվապահների մասնագիտական-սոցիալական պատասխանատվության բարձրացմամբ նպաստել Հայաստանում հաշվապահական և հարկային հաշվառման զարգացմանը։

Կրթաթոշակի շահառուները կստանան՝

- դրամական խրախուսում՝ ամսական 30 000 ՀՀ դրամ,
- անվճար մասնակցության հնարավորություն Հայաստանում ոլորտի լավագույն մասնագետների կողմից անցկացվող սեմինարներին,
- պրակտիկայի, հետագայում նաև աշխատանքի առաջարկ ստանալու իրական հնարավորություն ինչպես Հայաստանի հաշվապահների ասոցիացիայում, այնպես էլ՝ ասոցիացիայի գործընկեր գրասենյակներում, այդ թվում՝ մարզային 34 քաղաքներում։

Կրթաթոշակի շահառու ճանաչման պայմաններն են՝

- բարձր առաջադիմություն (ՄՈԳ-ը պետք է լինի 16.1 և բարձր),
- ներկայացված ինքնակենսագրական,
- հանձնաժողովի կողմից կազմակերպված հարցազրույցի հաջող հաղթահարում։

Ցանկացողները պետք է մինչև 2024 թ. հունվարի 26-ը ներառյալ գրանցվեն հետևյալ հղումով։